«LEADERS2LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Leaders2Leaders»-ը շարունակական զարգացման տրանսֆորմացիոն ծրագիր է, նախատեսված Արցախից բռնի տեղահանված ապագա առաջնորդների համար, իրականացվող հավասարը՝ հավասարին սկզբունքով:

Առկա դժվարություններին և արհավիրքներին առերեսվելով՝ այս առաջնորդները աննախադեպ տոկունություն ցուցաբերեցին:

«Leaders2Leaders» ծրագիրն ուղղված է վերջիններին հնարավորություններ տալուն, որպիսի շարունակեն առաջնորդությանը միտված իրենց ճանապարհը, հարմարվեն փոփոխություններին՝ ստեղծելով բարեկեցիկ ապագա ոչ միայն իրենց, այլև իրենց ընտանիքների, համայնքների և երկրի համար:

Ծրագրի իրականացումը հնարավոր դարձավ «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության, «Մատենա» միջազգային դպրոցի փորձագիտական խմբի, ինչպես նաև Հայաստանում Հարվարդի և Օքսֆորդի համալսարանների հայ շրջանավարտների համատեղ ջանքերով:

Նրանք բոլորը միավորվել են մեկ միասնական նպատակի շուրջ՝ ձեռք մեկնել Արցախի իրենց գործընկերներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նպաստել մասնագիտացման և վերապատրաստման համալիր գործընթացներին, բարձրացնել աշխատաշուկայում Արցախի մասնակիցների մրցունակությունը, օգնություն առաջարկել նրանց ձեռնարկատիրական նախաձեռնություններում, և, ինչն առավել կարևոր է՝ ստեղծել Հայաստանի առաջնորդների հուսալի համախոհների ցանց:

«LEADERS2LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- **Անհատական աջակցություն՝** ծրագիրը տալիս է մասնակիցների անհատական կարիքների բավարարմանը միտված մենթորություն:
- **Սոցիալ-էմոցիոնալ աջակցություն, ինքնագիտակցության զարգացում, ունակությունների համալիր գնահատում և զարգացում՝** ծրագրի շնորհիվ մասնակիցները հարմարեցնում են ստացված առաջնորդության, շփման, ժամանակակից մասնագիտական պրակտիկաների ունակությունները նոր իրողությունների հետ:
- **Փորձագիտական ցանցի հասանելիություն՝** կիրառելով Մատենայի որակավորված մասնագետների և Հարվարդի ու Օքսֆորդի շրջանավարտների գիտելիքների հսկայական ցանցի առկա փորձը՝ ծրագրի մասնակիցները ստանում են աննախադեպ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- **Կարիերայի ուղի՝** ծրագիրն առաջարկում է կարիերայի հարցերով ինտենսիվ խորհրդատվություն՝ մասնակիցներին օգնելով սահմանել իրենց նախասիրությունները եւ ընտրել հաջողակ կարիերայի ուղի:
- **Աջակցություն աշխատանքի տեղավորմանը՝** Leaders2Leaders-ը օգնում է արցախցի առաջնորդներին կողմնորոշվել աշխատաշուկայի բարդությունների շուրջ՝ առաջարկելով աջակցություն ռեզյումեի կազմման, հարցազրույցին պատրաստվելու և պոտենցյալ գործատուների հետ վերջիններին կապելու գործընթացներում:
- **Հնարավորություններ ձեռնարկատիրական գործունեության համար՝** բոլոր նրանց համար, ովքեր հակված են զբաղվելու ձեռնարկատիրությամբ, ծրագիրը զարգացնում է բիզնես գաղափարներ՝ տրամադրելով մենթորություն և ռեսուրսներ՝ ձեռնարկությունների բարեհաջող ստեղծման նպատակով:

ԲՅՈՒՋԵ

Ծրագիրը բաղկացած է 8 մոդուլներից, յուրաքանչյուր մոդուլի արժեքը կազմում է՝	**132 ԱՄՆ դոլար՝ մասնակցի հաշվով**
Ծրագրի յուրաքանչյուր փուլի արժեքը կազմում է՝	**84 480 ԱՄՆ դոլար**

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 168 960 ԱՄՆ դոլար

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ՝	**«Մատենա» միջազգային դպրոցի, Հայաստանում Հարվարդի համալսարանի և Հայաստանում Օքսֆորդի համալսարանի շրջանավարտների միություններ**
Աշխարհագրություն	**Երևան և ՀՀ բոլոր մարզեր**
Իրականացման ժամկետ	**Նոյեմբեր 2023 – հունիս 2024**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Ուղղակի շահառուներ՝ **160 մասնակից (երկու փուլով)**
- Անուղղակի շահառուներ՝ **160 տուժած ընտանիք**
- **Հայաստանի առաջնորդական համայնքներ**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Համակարգային մոտեցումն ապահովում է ամբողջական զարգացում՝ նպաստելով ինչպես անհատական աճին, այնպես էլ մասնակիցների միջև կոլեկտիվ սիներգիային, ստեղծում է առաջնորդների նոր համայնքներ: